

Ե Ր Ե Վ Ա Ն Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն

Մ Ե Ր Ի Վ Ա Ր Դ Ա Ն Ի Վ Ա Ր Դ Ա Ն Յ Ա Ն

Ա Ն Ց Ո Ղ Ա Կ Ա Ն Բ Ա Ց Ե Ր Ո Վ Խ Ն Դ Ի Ր Ա Ջ Ո Ի Ի Կ Կ Ա Ռ Ո Ի Ց Ց Ն Ե Ր Ո
Ա Ն Գ Լ Ե Ր Ե Ն Ո Ի Մ
(Հ Ա Ց Ե Ր Ե Ն Ի Ջ Ո Ի Գ Ա Դ Ի Ր Ո Ի Թ Ց Ա Մ Բ)

Ժ.02.07 – «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ե Ր Ե Վ Ա Ն 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բ.Գ.Թ., պրոֆեսոր Ե. Մխիթարյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բ.Գ.Դ., պրոֆեսոր Ա. Հովհաննիսյան
Բ.Գ.Թ., դոցենտ Կ. Վեյլան

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թ. նոյեմբերի 5-
ին՝ ժամը 12:30-ին, ՀՀ ԲՈՀ-ի՝ ԵՊՀ-ում գործող 009 “Օտար լեզուներ”
մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. հոկտեմբերի 4-ին:

Մասնագիտական խորհրդի

Գիտական քարտուղար,

Բ.Գ.Դ., պրոֆեսոր՝



Ե. Լ. Երզնկյան

Հայտնի է, որ լեզվի յուրահատուկ դերը պայմանավորված է նրա հարորդակցական և տեղեկատվական կարևորագույն գործառնություններով:

Լեզուն ոչ միայն արտացոլում, այլև արտահայտում է հասարակական գիտակցությունն իր ողջ ծավալով: Այն որպես մտքեր կազմելու և արտահայտելու նյութական միջոց, մարդկանց մեջ գոյություն ունի որպես «ներունակ հարստություն, որը իրացվում, գործադրվում է հարորդակցման ընթացքում»:¹ Լեզվի նյութական միավորներով և միջոցներով ձևավորված մտքերի իրացումը կատարվում է երկու ճանապարհով, երբ ա) արտահայտման ձևերը ներկայացված են իրենց ամբողջ ծավալով, և բ) դրանք ներկայացված են որոշակի բացթողումներով: Այդ երկրորդ տիպի կառույցներն են, որ հանդես են գալիս որպես մեր ուսումնասիրության առարկա:

Խոսելիս հաճախ բաց ենք թողնում նախադասության այս կամ այն անդամը, որը, սակայն, լսողը հեշտությամբ մտովի վերականգնում է՝ ըստ խոսքային միջավայրի ու իրադրության: Նախադասության կազմից վերականգնման ենթակա այս անդամի կամ անդամների բացակայությունը ստեղծում է մի կառույց, որը կոչվում է թերի կամ զեղչված անդամով նախադասություն: Այդ պակասը չի ազդում նախադասության բովանդակության վրա. այն վերաբերում է միայն նրա կառուցվածքին: Տեսական քերականության մեջ այդ տիպի նախադասությունները լուրջ ուշադրության են արժանացել, և կան բավականաչափ աշխատություններ՝ նվիրված այդ թեմային: Բայց քանի որ զեղչումը հիմնականում դիտվում է որպես շարահյուսական կամ շարահյուսական-ոճական հնարանք, լեզվաբանների ուշադրությունը սևեռված է հենց կառուցվածքի վրա: Զեղչման են ենթակա նախադասության գրեթե բոլոր անդամները, այդ թվում՝ խնդիրը:

Մեր ուսումնասիրության անմիջական առարկան անցողական բայերով խնդրագուրկ կառույցներն են անգլերենում հայերենի զուգադրությամբ:

Ինչպես լեզվական ցանկացած միավոր, զեղչված անդամով նախադասություններն ունեն իրենց հատուկ կառուցվածքային, իմաստաբանական և հարորդակցական-գործաբանական առանձնահատկությունները:

Սակայն հարկ է նշել, որ անգլերեն նախադասությունների այս տիպը և հատկապես դրանց գործառական-գործաբանական նախադրյալները չեն արժանացել լիարժեք և բազմակողմանի քննության: Ոչ պակաս կարևոր է

¹ Աղայան Է.Բ. *Լեզվաբանության հիմունքները*, Երևան, ԵՊՀ հրատ., 1987, էջ 9:

պարզել նաև լեզվական և ոչ լեզվական այն նախադրյալները, որոնք նպաստում են կառույցի այդ տեսակի առաջանալուն:

Ինչ վերաբերում է հայերենին, հայ լեզվաբանները չեն անդրադարձել այդ հարցին՝ բացի մի քանի դատողություններից: Ակներն է, որ դժվարություններ են առաջանում անգլերեն նախադասությունը հայերեն վերածելիս, քանի որ վերջիններիս շարահյուսական կառուցվածքը որոշ չափով տարբերվում է անգլերենից: Սա վկայում է այն մասին, թե որքան մեծ են գուգադրական ուսումնասիրությունների անհրաժեշտությունը և կարևորությունը առանձին լեզուների առավել խորը ուսումնասիրության հարցում:

Այդ բնույթի վերլուծությունը հնարավորություն է տալիս լեզվական առանձնահատկություններում ընդհանրացումներ կատարելու, ինչը նպաստում է նաև լեզուների գործնական ուսումնասիրությանը: Չուգադրական ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռում նաև ի հայտ բերելու քննարկվող լեզվական իրողության խորքային առանձնահատկությունները: Ասվածն ամբողջությամբ վերաբերում է անգլերենի խնդրագուրկ կառույցներին և դրանց հայերենի համարժեքներին: Այս տիպի ուսումնասիրությունը, որը միավորում է գեղչված խնդրով նախադասությունների իմաստային-բառային և հաղորդակցական-գործաբանական վերլուծությունը և դրանց գուգադրումը հնդեվրոպական լեզվաընտանիքի երկու հեռավոր ճյուղերին պատկանող լեզուներում, միանգամայն **արդիական** է: Աշխատանքում խնդրի հիմնահարցն ուսումնասիրվել է հոլովական քերականության (Case Grammar), թեմատիկ տեսության (Theta Theory), կապակցվածության տեսության (Binding Theory), դերային-վերաբերային քերականության (Role and Reference Grammar), զրո կարգի սկզբունք (The Empty Category Principle) և մի շարք այլ ժամանակակից տեսությունների դիրքերից: Այն **արդիական** է ոչ միայն լեզվական ընդհանրությունների վերհանման առումով, այլև նրանով, որ այն հնարավորություն է տալիս ավելի խոր և բազմակողմանիորեն բնութագրել տվյալ շարահյուսական կառույցի հաղորդակցական և գործաբանական դերն ինչպես անգլերեն, այնպես էլ հայերեն ասույթում:

Նետազոտության **նպատակն** է համակողմանիորեն ուսումնասիրել գեղչված խնդրով կառույցներն անգլերենում, հատկապես այն իրողությունները, որոնք թույլ են տալիս կառույցի այդօրինակ վերափոխումներ անգլերենում և գուգադրել դրանք հայերենի համապատասխան կառույցների հետ:

Այդ նպատակին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ **խնդիրները**.

- քննության առնել անցողականության-անանցողականության կարգերի բովանդակությունը նորագույն մոտեցումների և մեթոդների դիրքերից,
- ուսումնասիրել զեղչված ուղիղ խնդրով կառույցները՝ զուգահեռ անցկացնելով անուղղակի խնդրի զեղչման հետ՝ առաջինների կիրառման հաճախականության աստիճանը սահմանելու նպատակով,
- ճշտել, թե գործառական տեսակետից որ դեպքերում խնդրի բացթողումը կարելի է բացատրել զեղչման երևույթով և որ դեպքերում՝ զրո կարգի առկայացմամբ,
- բացահայտել լեզվական այն պայմանները, որոնք նպաստում են խնդրի զեղչմանը,
- լուսաբանել արտալեզվական գործոնի դերը խնդրի զեղչման հարցում,
- տալ հայերենի հոլովական համակարգի և կառուցվածքի համառոտ նկարագրություն՝ անգլերենի համեմատությամբ,
- անցկացնել անգլերենի և հայերենի խնդրագուրկ կառույցների զուգադրական վերլուծություն՝ ի հայտ բերելով դրանց միջև գրանցված զուգամետ և տարամետ հատկությունները,
- քննել անդրադարձ և վոխադարձ բայերով կառույցներն անգլերենում և դրանց համապատասխան կառույցները հայերենում՝ բացահայտելով դրանց ձևաբանական և կառուցվածքային նմանությունները և տարբերությունները:

Հետազոտության **նորույթն** այն է, որ առաջին անգամ անգլերենի և հայերենի խնդրագուրկ կառույցները ենթարկվում են բազմակողմանի և հանգամանալից քննության, ընդ որում՝ շեշտը դրվել է այն նախադրյալների վրա, որոնք նպաստում են անցողական բայերի առկայացմանն առանց խնդրի: Ուշադրության կենտրոնում ոչ միայն ուղիղ, այլև անուղղակի խնդրի զեղչումն է: **Նորույթ** է նաև այն, որ աշխատանքում կատարվել է անգլերենի և հայերենի զեղչված խնդրով կառույցների զուգադրական վերլուծություն՝ ի հայտ բերելով դրանց միջև եղած տարբերությունները և նմանությունները: Հատկանշական է, որ հայերենի վերաբերյալ այդ բնույթի հետազոտություն կատարվում է առաջին անգամ:

Աշխատանքի **տեսական նշանականությունն** այն է, որ կատարված քննությունը և ստացված արդյունքները որոշակի ներդրում են գործառական լեզվաբանության տեսության, հատկապես զեղչման և դրա հարակից՝ զրո կարգի տեսությունների մեջ՝ հստակեցնելով վերջիններիս կիրառման սահմանները: Ուսումնասիրությունը կարևորվում է նաև այն առումով, որ աշխատանքում զեղչված խնդիրը քննելիս միանգամայն արդյունավետ կիրառվել են բառի քերականության (Word Grammar) դրույթները, ինչն էլ մեկ անգամ ևս հաստատում է այդ տեսության կենսականությունը: Հետազոտությունը որոշ

արժեք է ներկայացնում նաև տիպաբանության, հատկապես կառուցվածքային տիպաբանության համար՝ այդ ոլորտն ընդլայնելով նոր փաստերով քննվող լեզուների վերաբերյալ:

Աշխատանքի **գործնական արժեքն** այն է, որ ուսումնասիրության արդյունքները կարող են գործածվել անգլերենի տեսական քերականության, գործառական և գործաբանական լեզվաբանության, կառուցվածքային տիպաբանության դասընթացներում: Դրանք կարող են օգտակար լինել թարգմանչական գործում, ինչպես նաև դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ կազմելիս:

Աշխատանքում **մեթոդաբանական հիմք** են ծառայել գործառական և գործաբանական լեզվաբանության դրույթները, Չ. Ֆիլմորի հոլովական քերականության տեսությունը, բառի քերականության (Word Grammar), ինչպես նաև կառուցվածքային տիպաբանության ուսումնասիրության հիմունքները:

Հետազոտության **փաստական նյութը** քաղված է ժամանակակից ամերիկյան և բրիտանական գրականությունից, հայ գրողների ստեղծագործություններից, օրնակների որոշ մասը վերցված է նաև տարբեր բառարաններից: Հայերենի նյութը քաղել ենք «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանից» (1-4 հատոր.1974-1980), իսկ անգլերենինը՝ Oxford Advanced Learner's Dictionary (OALD), Longman Language Dictionary (LLD), Longman Language Activator (LLA) և այլ հանրահայտ բառարաններից:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության արդիականությունը, պարզաբանվում են ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները, ներկայացված են հետազոտության գիտական նորույթը, տեսական և գործնական արժեքը, ինչպես նաև նշվում են հետազոտության ընթացքում կիրառված մեթոդները:

Առաջին գլուխում՝ «Խնդրի կարգի ուսումնասիրության տեսական հենքը», քննության են առնվել հետևյալ հիմնահարցերը. 1) խնդրի կարգավիճակը նախադասության կառուցվածքում, 2) խնդրի տիպավորումը, 3) խնդրի տեղը հոլովական քերականության մեջ, և 4) պարտադիր և ոչ պարտադիր արժույթականությունը:

Խնդիրը, ինչպես որոշիչն ու պարագան, ավանդական քերականության մեջ դասվում են նախադասության երկրորդական անդամների շարքը, բայց այն զգալիորեն տարբերվում է նախադասության մյուս անդամներից՝ զբաղեցնելով բացառիկ տեղ այդ ստորակարգության մեջ: Խնդիրը՝ որպես շարահյուսական կարգ, կառուցվածքի այն տարրն է, որին ուղղված է ենթակայի (սուբյեկտի) գործողությունը՝ այս կամ այն կերպ թելադրելով սեռի քերականական կարգի կայացումը:

Անգլերենում բայը նկարագրվող իրողությունն առավելապես կապում է խնդրին, քան ենթակային, քանի որ այդ իրողության շնորհիվ են տեղի ունենում փոփոխություններ հենց խնդրո առարկայի մեջ: Խնդիրը լրացնում է ստորոցայի իմաստը՝ դարձնելով այն ավելի որոշակի: Գրեթե բոլոր լեզվաբանները խնդրի քերականական իմաստը դիտում են ստորոցայի ճշգրտման մեջ՝ այն համարելով խնդրի հիմնարար գործառույթը: (Ա. Քենի, Օ. Ջեսպերսեն, Փ. Մաթյուզ, Ռ. Քվիրք, Ս. Գրինբաում, նաև հայ լեզվաբաններ Մ. Աբեղյան, Վ. Առաքելյան, Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան և այլն):

Շարահյուսական համատեքստը, որտեղ խնդիրն իրականացնում է այդ գործառույթը, անցողական բայով կառույցն է: Կառուցվածքային լեզվաբանության ներկայացուցիչները նախադասության կարևոր բաղադրիչների շարքին դասում են ենթական, ստորոցայը և խնդիրը՝ շեշտելով այն հանգամանքը, որ վերջինս սերտորեն կապված է ստորոցայի հետ: Այն, որ բայը սերտորեն կապված է խնդրի (հատկապես ուղիղ խնդրի) հետ, վկայում է այն փաստը, որ բացատրական բառարաններում բայի սահմանումն անպայմանորեն տրվում է խնդրի համադրությամբ՝ to bar – to block a road, path, etc.; to join – to fix or connect two or more things together:

Առաջին գլխի երկրորդ ենթազվխում ուսումնասիրվում են այն սկզբունքներն ու մոտեցումները, որոնք ընկած են Խնդիրների տիպավորման հիմքում: Անգլերենում այն գլխավորապես հիմնված է շարահյուսաձևաբանական սկզբունքի վրա, որի շնորհիվ առանձնացվում են հիմնականում խնդրի երեք տեսակ՝ ուղիղ, անուղղակի (նախադրավոր և ոչ նախադրավոր) և բարդ: Հայերենում խնդրի տիպավորման հիմքում ընկած է ոչ միայն շարահյուսական-ձևաբանական, այլև իմաստային (լայն առումով) սկզբունքը, ինչի շնորհիվ հայերենում տարբերակվում են ոչ միայն ուղիղ և անուղղակի խնդիր, այլև յուրաքանչյուրի մեջ առանձնացվում են տարբեր ենթախմբեր՝ ըստ իմաստային և այլ չափանիշների: Երկու լեզուներում էլ խնդիրը գործածվում է ինչպես բայի դիմավոր, այնպես էլ անդեմ ձևերից և ածականից հետո: Անգլերենի խնդիրների մեջ յուրահաստուկ տեղ է գրավում բարդ խնդիրը, որի համարժեքը հայերենը չունի, ուստի հայերեն թարգմանվում է խնդիր երկրորդական նախադասությամբ:

Այստեղ ուսումնասիրվել է նաև խնդրի տեղը հոլովական քերականության մեջ: Առանձնացվել է այն սկզբունքը, որի համաձայն բայ ստորոցայը նախադասության մեջ հանդես է գալիս մի շարք ակտանտներով, որոնք բաժանվում են երկու խմբի՝ 1) հիմնական ակտանտներ (արգումենտներ)՝ ենթակա, խնդիր, 2) երկրորդական արգումենտներ (գործիք, տեղ և այլն): Մեր ուսումնասիրության առարկան եղել է խնդիրը (ուղիղ և անուղղակի՝ առաջինիս շեշտադրությամբ): Խնդիրն այստեղ քննարկվել է հոլովական քերականության սկզբունքով, այսինքն՝ բոլոր այն խորքային հոլովների դիրքերից, որոն-

ցում խնդիրը հանդես է գալիս նախադասության մեջ: Այստեղ խնդիրը հանդես է գալիս մի շարք իմաստային դերերում 1. Ազենտիվ - *The window was opened by John*, Բենեֆակտիվ - *I bought the picture for Jane*, Ինստրումենտիվ - *he wrote the letter in pencil*, ֆակտիտիվ - *He made a coat*, լրկատիվ - *He crossed the street*. Մենք կիրառել ենք այն տերմինաբանությունը, որն ընդունված է լեզվաբանության այս ոլորտում՝ ազենտ (գործող), պացիենտ (կրող), ֆակտիտիվ (հետևանքի խնդիր), բենեֆակտիվ (օգուտի կամ շահի խնդիր), դատիվ (տրական), ռեցիպիենտ (ընդունող), ինստրումենտիվ (գործիք), լրկատիվ (տեղ), էքսպերիենտիվ (զգացության կրողի հոլով):

Աշխատանքի այս բաժնում ուսումնասիրվել է նաև պարտադիր և ոչ պարտադիր արժույթականության հարցը: Լեզվաբանության մեջ չկա միանշանակ մտեցում առ այն, թե նախադասության որ անդամները պետք է համարել պարտադիր, որպեսզի ապահովվի նախադասության իմաստաբանական և շարահյուսական ավարտվածությունը: Այդ հարցը լուծելու համար պետք է սահմանել նախադասության միջուկը՝ նրա նվազագույն շարահյուսական բաղկացությունը: Այսպես՝ Վ. Ադոնինի կարևորում է ենթակայի և ստորոգյալի հարաբերակցությունը՝ շեշտելով այն միտքը, որ դրանք կարելի է բնորոշել միայն միմյանց հարաբերակցելով:² Այս կարծիքը բաժանում է Ա. Խոլոդովիչը, ըստ որի՝ ստորոգյալի գերակշռությունը լեզվաբանորեն ապացուցելի է, մինչդեռ ենթակայինը՝ ոչ:³ Ստորոգյալի միջոցով արտահայտվում են բոլոր քերականական իմաստները, որոնցով էլ արտահայտվում է ստորոգումը:⁴

Մ. Ստեփանովան և Գ. Հելբիգը առաջարկում են «կառուցվածքային մի-նիմում» հասկացությունը, որի տակ հասկանում են նախադասության այն անդամները, որոնց առկայությունը անհրաժեշտ է բովանդակային առումով և շարահյուսական տեսակետից ճիշտ կազմված, իմաստաբանորեն ավարտուն նախադասություն ունենալու համար: Որպեսզի սահմանեն նախադասության պարտադիր անդամների քանակը, այս լեզվաբանները առաջարկում են անցկացնել, այսպես կոչված, «վերացման թեստ», երբ կառույցի բաղադրիչները աստիճանաբար վերացվում են և վերջում մնում են միայն այն

² Адмони В.Г. *Грамматический строй как система построения и общая теория грамматики*. Л.: Наука, 1988, с. 50.

³ Холодович А.А. *О второстепенных членах предложения* // *Филологические науки*, 1959, № 4, сс. 18-31.

⁴ Левицкий Ю.А. *Основы теории синтаксиса*. М.: УРСС, 2005, с. 177.

անդամները, որոնք անհրաժեշտ են նախադասության իմաստը ապահովելու համար:⁵

Նման մոտեցումը իրապես տրամաբանական է, քանզի եթե մենք դիտարկենք «Ես ապրում եմ...» և «Ես տվեցի...» նախադասությունները, ապա կհամոզվենք, որ թեև դրանք իրենց կազմում ունեն և՛ ենթակա, և՛ ստորոգյալ, միննույն է, գուրկ են իմաստից պարագայի և խնդրի բացակայության պատճառով:

Այստեղ քննարկվում է նաև զեղչման և զրո անդամի հարաբերակցության հարցը: Այս երկու հասկացությունների տարանջատման հարցում մենք ուղղորդվել ենք Վարդուլի մոտեցմամբ: Նա խիստ սահմանագիծ է անցկացնում զեղչված և զրո անդամի միջև. առաջինը, զրում է հեղինակը, ներկայացված է շարույթի բացակայությամբ, երկրորդը՝ զրո շարույթով (շարույթի զրո տարբերակով): Ի տարբերություն զեղչված անդամի, որը կախված է համատեքստից ու իրադրությունից, զրո անդամը բացահայտ շարույթի համարժեք փոխանակում թույլ չի տալիս:⁶ Այս կապակցությամբ արժե հիշատակել Ն. Արությունովայի խոսքերը.

«Զրո տարրերի առանձնահատկությունը ոչ թե նրա արտահայտման ձևի բացակայությունն է, այլ նրա յուրահատկությունը»:⁷

Երկրորդ գլուխը, որ վերնագրված է «Խնդրագուրկ կառույցների առկայացման բառային-իմաստային և ձևաբանական-շարահյուսական նախադրյալները», նվիրված է խնդրագուրկ կառույցների առկայացմանը նպաստող բառային-իմաստային և ձևաբանական-շարահյուսական պայմանների բացահայտմանը: Այստեղ ուսումնասիրվում են նաև անդրադարձ և փոխադարձ բայերով կազմված կառույցները:

Կարևոր գործոններից մեկը իմաստաբանական և ձևաբանական-շարահյուսական պայմաններն են, որոնք անցողական բայերին թույլ են տալիս գործածվել առանց խնդրի: Այստեղ առանձին կարևորություն է ստանում այն հանգամանքը, թե տվյալ բայը քանի խնդիր կարող է ունենալ: Իմաստային լայն դաշտ ունեցող բայերը հակված են մեծ քանակությամբ խնդիրներ վերցնելու: Իրոք, իմաստների լայն շրջանակ ունեցող բայերը, ինչպիսիք են take, put, have, pay, show, give և այլն, կարող են վերցնել անսահման թվով խնդիր-

⁵ Степанова М., Хельбиг Г. Части речи. *Проблема валентности в современном немецком языке* // Иностранные языки в школе, 1973, № 6, с. 138-322.

⁶ Вардудль И.Ф. *Основы описательной лингвистики* // Синтаксис и супрасинтаксис. М.: УРСС, 2006, с. 105.

⁷ Арутюнова Н.Д. *О значимых единицах языка* // Исследования по общей теории грамматики. М., 1968, с. 50.

ներ. Օրինակ՝ take բայը կարող է վերցնել հետևյալ խնդիրները՝ a box, medicine, blood pressure, criticism և այլն: Դրանց հակառակ՝ read, sing, drink, eat, dance և այլ բայեր, որոնք ունեն իմաստների նեղ շրջանակ, ունենում են սահմանափակ թվով խնդիրներ: Օրինակ՝ read a book (journal, letter, catalogue): Հարկ է նշել, որ վերջին տասնամյակներում որոշ լեզվաբաններ վերանայել են իրենց կարծիքը անցողականության կարգի վերաբերյալ՝ դրա նկատմամբ ցուցաբերելով ավելի ազատ մոտեցում: Այսպես՝ Պ. Հոպերը և Ս. Թոմփսոնը առաջարկում են անցողականության չափանիշների սանդղակ (parameters of scalar transitivity), որի շնորհիվ կարելի է որոշել, թե անցողական բայով արտահայտված գործողությունը որքանով է փոխանցվում, ազդում խնդրի վրա: Եթե մենք կիրառենք այդ տեսությունը մեր ուսումնասիրության առարկայի նկատմամբ, ապա կարող ենք ասել, որ խնդրի բացակայությունը բայը դնում է անցողականության սանդղակի ամենացածր դիրքում: Այստեղ ամենածայրամասային կետում գտնվում են անցողական այն բայերը, որոնք չեն վերցնում խնդիր, որովհետև ցույց են տալիս ոչ թե գործընթաց, այլ ենթակայի՝ բայ-ստորոգյալով արտահայտված գործողություն կատարելու հնարավորությունը: Խոսքը հիմնականում վերաբերում է խնդրագուրկ անցողական բայերին: Այդ բայերի թվին են պատկանում read, write, sing, paint, dance և այլ բայեր:

Օրինակ՝ ա) She **sings** beautifully.

բ) Some children can **read** and **write** before they go to school. (LLA)

Այս խմբին մոտ են զգայություն ցույց տվող բայերը՝ see, hear, feel, understand, ինչպես նաև զգացմունքներ արտահայտող love, hate, like բայերը:

Օրինակ՝ ա) Turn the light on so we can **see**. (OALD)

բ) You don't realize how people can **hate**. (Miller)

գ) Remember that I am only a child. I never **loved** before. (London)

Ինչպես արդեն շեշտվել է, բերված բոլոր օրինակներում բայերը (read, write, paint, dance, hear, see, hate, love և այլն) չեն արտահայտում բուն գործողություն, այլ գործողություն կատարելու ենթակայի ունակություն կամ հակվածություն, և հետևաբար նրանց համադրությունը խնդրի հետ ամենևին էլ պարտադիր չէ: Խնդիր հաճախ չեն վերցնում այն բայերը, որոնք ունեն իմաստների նեղ շրջանակ, որի շնորհիվ դրանց խնդիրները գուշակելի են, և դրանց կարիքը չի զգացվում նախադասության կառույցում:

Օրինակ՝ ա) You **smoke** more than enough as it is, and the brand of tobacco will make no difference. (London)

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում drink բայը: Երբ այդ բայը կիրառվում է առանց խնդրի, ձեռք է բերում նոր համանշանակություն՝ drink alcohol (խմել ոգելից խմիչք): Drink բայի այդպիսի դրսևորումը հայտնի է որ-

պէս բայի բառայնացում (lexicalization): Նույն շարքում կարելի է դասել to order- to expect

բայերը.

Օրինակ՝ ա) After they **ordered**, the senior professor cleared his throat and said... (Segal)

Անցողական բայերի առանց խնդրի գործածությունը որոշ լեզվաբաններ գուգորդում են անանցողականության կարգի հետ, բայց այդպիսի մոտեցումը ամեննին հիմնավորված չէ: Տվյալ բայերի դեպքում խնդիրը միշտ առկա է խորքային կառույցում, ինչը չի կարելի ասել անանցողական բայերի վերաբերյալ (He went there. They live in Paris): Ինչ վերաբերում է անցողական բայերին, խնդիրները գրանցված են իրենց սահմաններում:

Հարկ է նշել, որ խնդրագուրկ անցողական բայերով արտահայտված գործողությունները կարող են կանոնավոր բնույթ ունենալ և հաճախ հիմք են ծառայում անձին բնութագրելու համար և կարող են ներկայացված լինել համապատասխան գոյականներով:

Օրինակ՝

He drinks much. He is a drunkard.

He writes much. He is a prolific writer.

She reads a lot. She is an avid reader.

She eats a lot of food. She is a big eater.

Այն փաստը, որ բայով և համապատասխան գոյականով հանդես եկող երկու գուգահեռ կառույցները համարժեք են, հոմանշական հարաբերակցություն ունեն միւսյանց նկատմամբ, վառ դրսևորված է հետևյալ երկխոսությունում.

Amanda: Promise, son, you'll never **be a drunkard**.

Tom: I'll never be a **drunkard**, Mother.

Amanda: That's what frightened me so, that you'd be **drinking**. (Williams 460):

Բերված օրինակները թույլ են տալիս եզրակացնել, որ գործողություն կատարողը (ագենտը) հաղորդակցական առումով նույնպես կարևոր դեր է կատարում ասույթում, որովհետև գործողությունները բնորոշում են անձին, ներկայացնում նրա բարոյական կերպարը և հասարակական տեսակը: Փաստորեն կարելի է ասել, որ բայերը այս դեպքում գործում են իբրև գոյականներ, որոնց միջոցով բնորոշվում է անձի տիպարը:

Այս ամենը տրամաբանորեն ընդգրկվում է «բառի քերականության» (Word grammar) տեսության շրջանակներում: Լեզվաբանության այդ ուղղությունը, որի հիմնադիրը համարվում է Ռ. Հուդսոնը (Hudson 1984), հիմնված է ճանաչողական լեզվաբանության սկզբունքների վրա և համարվում է դրա ճյուղերից մեկը (Lakoff 1987; Langacker 1987; Taylor 1989): Այդ տեսության

շրջանակներում բառերը դիտվում են այնպիսի կառուցվածքային տարրեր, որոնք փոխկապված են միմյանցից:

Բայի իմաստը հաճախ ճշգրտվում է կառույցում առկա այլ բառերի հետ նրա կապակցելիության հանգամանքով: Նախադասությունում որոշակի մակբայների առկայությունը կարող է նպաստել խնդրագուրկ բայի իմաստի պարզեցմանը և հստակեցմանը: Այսպես, երբ *drink* բայը կապակցվում է *heavily, hard, excessively, somberly* բառերի հետ, այն ստանում է *drink alcohol* (խմել ոգելից խմիչք իմաստը, իսկ *thirstily* մակբայով՝ *drink water* ջուր խմել կամ այլ հեղուկ (ոչ ոգելից):

Օրինակ՝ ա) It was clear that Malone had been **drinking heavily**. (LLA)

բ) She picked up the cup and began **to drink thirstily**. (Shaw)

Որոշ դեպքերում տեղի կամ ժամանակի պարագան կարող է հանդես գալ որպես իմաստը սահմանելու (հստակեցնելու) գործոն:

Օրինակ՝ Sophie sings in the **church choir**. այստեղ տեղի պարագայից պարզ է դառնում, որ Սոֆին հոգևոր երգեր է կատարում: Խնդրագուրկ կառույցներն ավելի հաճախ հանդիպում են անցողական բայերի անդեմ ձևերի հետ (անորոշ դերբայ, ներկա դերբայ, գերունդ):

Օրինակ՝ Well, if you're a poor driver you oughtn't to try **driving** at night. (Fitzgerald)

Խնդրագուրկ կառույցների այդ հատկանիշը հատկապես վառ է դրսևորվում, երբ դրանք հանդես են գալիս որպես նախադասության բազմակի անդամներ:

Օրինակ՝ ա) If you'll use the thirty-five dollars a month for **cooking, washing and scrubbing...** (London)

բ) I spent my mornings with Wayan at her shop, laughing and **eating**. (Gilbert)

Խնդիրը կարող է բացակայել նաև այն դեպքում, երբ նախադասությունում կան բազմակի բայ-ստորոգյալներ, և խնդիրը հիմնականում գործածվում է առաջին բայի հետ:

Օրինակ՝ My cousin Jock **wooded a deaf girl**, wooed and **married**. (Coppard)

Խնդիրը կարող է պահպանվել բազմակի բայ-ստորոգյալների յուրաքանչյուր անդամի հետ, երբ առանձին բայի իմաստը հաղորդակցական տեսակետից կարևորվում է և ոճաբանական առումով նշույթավորված է: Օրինակ՝ Her reaction **surprised me** and **touched me**, but more than anything it **shamed me**. (Gilbert)

Խնդիրը կարող է հայտնվել վերջին բայի հետ, եթե իմաստաբանական տեսանկյունից կարևորվում է հենց այդ բայը:

Օրինակ՝ ա) I noticed and liked **it**. (Segal)

բ) You would become logjammed with the effort to say, and do and settle **everything** at once. (Gilbert)

Անդրադարձ բայերի կիրառումը անդրադարձ դերանուններով կամ առանց դրանց չի հանգեցնում քերականական կարգավիճակի կամ իմաստային փոփոխման: Սակայն որոշ դեպքերում բայ+անդրադարձ դերանուն կապակցությունը ստանձնում է յուրահատուկ իմաստային երանգներ:

Օրինակ՝ He washed himself, dressed himself, shaved himself ձևերը ցույց են տալիս այնպիսի գործողություններ, որ մարդիկ սովորաբար կատարում են ամեն օր, և պարտադիր չէ դրանք զուգակցել նշված դերանունների հետ, ընդհակառակը, դրանց առկայությունը կառույցում նոր իմաստ կարող է հաղորդել նախադասությանը:

Օրինակ՝ She was no longer able to wash herself. Նա այլևս չէր կարող ինքնուրույն լվացվել:

Այստեղ շեշտվում է անձի անկարողությունը (հավանաբար հիվանդության կամ ծերության պատճառով)՝ կատարելու իր համար սովորական կամ իրենից սպասվող գործողությունը: Իսկ որոշ դեպքերում դրանց զեղչումը երկիմաստության տեղիք է տալիս, ինչը հնարավոր է վերացնել լայն համատեքստի միջոցով:

Օրինակ՝ He never **shaves** before lunch.

Տվյալ նախադասությունը կարող է մեկնաբանվել երկկերպ. ա) նա երբեք չի սափրում (որևէ մեկին) նախաճաշից առաջ, բ) նա երբեք չի սափրվում նախաճաշից առաջ: Ջ. Լայոնզը համարում է, որ առաջին դեպքում ունենք խնդրագուրկ կառույց, երկրորդ դեպքում՝ ներակա անդրադարձ: Փոխադարձ բայերը պահպանում են փոխադարձությունը՝ անկախ այն բանից՝ ունեն արդյոք նրանք երկրորդ բաղադրիչը, թե ոչ: Դրանք համարվում են բառային փոխադարձներ ի տարբերություն վերլուծական փոխադարձների, որոնք վերցնում են երկրորդ բաղադրիչը:

Եթե արգումենտների գործողությունները համաչափ են, փոխադարձ դերանունը կարող է զեղչվել: Օրինակ՝ We **talked** on the phone for an hour:

Չակառակ պարագայում դրանք վերցնում են խնդիր՝ արտահայտված (ոչ փոխադարձ դերանունով), որի դեպքում դրանք դադարում են փոխադարձ բայեր համարվելուց: Օրինակ՝ She kissed me swiftly... Այստեղ kiss բայը գործում է իբրև սովորական անցողական բայ՝ վերցնելով ուղիղ խնդիր (me):

Խնդրագուրկ փոխադարձ բայերն աչքի են ընկնում բազմիմաստությամբ. դրանք ցույց են տալիս՝ ա) զգացմունքային գործողություններ (embrace, kiss, hug), բ) բառային հաղորդակցություն (talk, speak, interrupt), գ) մտավոր ներգործություն (agree, argue, quarrel, squabble), դ) Ֆիզիկական ներգործություն (clash, collide, contact, fight), մտավոր ներգործություն (agree, argue, squabble, quarrel), 5) տարաբնույթ գործողություններ (շարժում, միացում, անջատում - meet, divorce, join, link):

Երրորդ գլուխը նվիրված է անգլերենի խնդրագուրկ կառույցների առկայացման հաղորդակցական և գործաբանական հայեցակերպերի ուսումնասիրությանը: Առանձին դիտարկվել են ուղիղ խնդրի և երկխնդիր բայերով կառույցների առկայացման գործաբանական և հաղորդակցական նախադրյալները: Խնդրագուրկ կառույցի առկայացման հարցում մեծ է համատեքստի դերը: Ինչպես նշում է Ջ. Ֆիրսը, բառի իմաստը կարելի է ճիշտ ընկալել այն բառերի միջավայրում, որոնց հետ այն, ինչպես լեզվաբանն ասում է, «բարեկամական կապ» է հաստատում:⁸ Լեզվի նկարագրությունը չի կարող լիարժեք լինել առանց դիմելու այն իրադրային համատեքստին, որտեղ գործում է տվյալ լեզվական երևույթը: Լեզվաբանները տարբերակում են երկու տեսակի համատեքստ լեզվական և արտալեզվական: Առաջինը տեքստի այն հատվածն է, որի սահմաններում պարզորոշ է դառնում նրա մեջ մտնող լեզվական տարրերի, միավորների նշանակությունը: Երկրորդի դեպքում կարևորվում այն բնական միջավայրը, որտեղ տվյալ նախադասությունն արտաբերվում է: Անցողական բայերի խնդրի զեղչումը կարելի է բացատրել իրադրային համատեքստով՝ նախորդող և հաջորդող, երբ կրկնողության դեպքում բայը կիրառվում է առանց նախադասության այդ անդամի:

Օրինակ՝ *The war is over. Did you hear?*

Օրինակում անցողական բայը գործածվում է առանց խնդրի, բայց այն միանգամայն ըմբռնելի է և կարող է վերականգնվել նախորդ նախադասությունից՝ *Did you hear that the war is over?* կամ՝ *I know, I know. It seems unimportant to you what I am doing, what I want to do.* (Williams)

Այստեղ խնդրի բացակայությունը լրացվում է հաջորդող նախադասությամբ: *I know it seems unimportant to you what I am doing, what I want to do.*

Որոշ դեպքերում խնդրի զեղչումը կարելի է մեկնաբանել ամբողջ տեքստի մակարդակով: Օրինակ՝ *“You really played great”, remarked Tashkenian.* (Segal)

Օրինակում *played* բայը վերաբերում է Սեգալի «The Class» վեպի հերոսին՝ հոչակավոր դաշնակահար Դենի Ռոսսին:

Արտալեզվական համատեքստը, որտեղ հնարավոր է դառնում խնդրի զեղչումը, կարող է ընդգրկել խոսելու պահին անձին շրջապատող մարդկանց, իրերը, բնությունը և այլն. Բերենք օրինակ՝ Ս. Քինսելայի «The Undomestic Goddess» վեպից.

“**Close**, please.” The make-up artist is brushing at my eyelids. “Now **open**.” “**Close** again”, says the make-up artist. Reluctantly I close my eyes:”

Ինչպես տեսնում ենք, ուղղակի խոսքում գրիմարարը չի գործածում **eyes** (աչքեր) բառը այն պատճառով, որ իր և հաճախորդի միջև առկա է իրավիճա-

⁸ Firth J. R. *Papers in Linguistics*. London: Oxford University Press, 1957.

կի փոխադարձ ըմբռնում, առարկաների և գործողությունների փոխկապակցություն:

Խնդրի զեղչումը անցողական բայեր պարունակող կառույցներում կարող է պայմանավորված լինել հաղորդակցական և գործաբանական գործոններով: Խնդիրը զեղչվում է, երբ հաղորդակցական կիզակետում գտնվում է ինքը՝ գործողությունը, և ոչ թե առարկան, որին ուղղված է այդ գործողությունը:

Օրինակ՝ **“Sing like hell! They must hear us. Sing! Sing!...They’ve heard us! Shout! Hooray!”** (Corrie)

Այս օրինակում խնդրագուրկ բայի գործածությունը կարելի է բացատրել նրանով, որ հանքափորները պայծառությամբ հետո մնացել էին փլատակների տակ և որպեսզի գրավեն վերևում գտնվող մարդկանց ուշադրությունը, իրենցից մեկին խնդրում են երգել, որ մարդիկ լսեն և օգնության գան. ըստ որում՝ դա հազիվ թե կարելի է երգ որակել, այն ավելի շատ նման է օգնության ճիչի:

Գործաբանական առումով խնդրի բացթողումը կարելի է բացատրել հոգեբանական և բարոյական նկատառումներով: Խոսողը չի ցանկանում նշել առարկան՝ քաղաքավարությունից դրդված: Խոսողը դիտավորյալ չի նշում խնդիրը, որնհետև այն իրեն ցավ է պատճառում: Դիտարկենք հետևյալ օրինակը

“Do they know?” He asked at last. (Maugham)

Խոսքը նկարիչ Մթրիքլենդի մասին է, որի մոտ բժիշկը բորոտության ախտանշան է հայտնաբերել և Մթրիքլենդն այնքան ցնցված է, որ ի վիճակի չէ արտաբերելու այդ բառը (leprosy): Մյուս դեպքերում խոսողը չի նշում խնդիրը՝ վախից դրդված կամ հոգեբանական այլ վիճակի պատճառով:

Որոշ դեպքերում խնդիրը կարող է փոխարինվել **it** չեզոք դերանունով, երբ խոսողը չի ցանկանում ինչ-որ նկատառումներով կոնկրետացնել խնդրի բովանդակությունը:

Աշխատանքի այս մասում ուսումնասիրվել է նաև խնդրի զեղչումը երկխոսության կառույցներում: Ուղիղ կամ անուղղակի խնդրի զեղչումը երկխոսության կառույցներում պայմանավորված է ասույթում այդ խնդրի գործաբանական արժեքի կարևորության աստիճանով. պահպանվում է այն խնդիրը, որը ավելի կարևոր, ավելի ծանրակշիռ է հաղորդակցական-գործաբանական տեսանկյունից: Ուղիղ խնդիրը չի պահպանվում մակերեսային կառույցում, եթե գործաբանական կիզակետում գտնվում է անուղղակի խնդիրը: Օրինակ՝ **“I’d like to thank all of you who contributed to the hospital appeal”**. (OALD) Այս օրինակում ուղիղ խնդրի զեղչումը կարելի է բացատրել նրանով, որ խոսողի համար կարևորվում է մարդկանց մասնակցությունը կամ աջակցությունը տվյալ միջոցառմանը (նվիրատվությանը) և ոչ թե ավանդի կամ ներդրման չափը, ծավալը:

Եթե կառույցում երկու հնարավոր խնդիրներից առկա է միայն մեկը, դա վկայում է այն մասին, որ հաղորդակցական տեսակետից առաջնությունը տրվում է հենց այդ միավորին՝ *She plans to show her paintings early next year.*

Այսպես՝ *show* բայի համար կարևորվում նկարների ցուցադրումը: Ինչ վերաբերում է անուղղակի խնդրին՝ ցուցահանդեսի այցելուներ, այն այնպես էլ պարզ է: Այստեղ, ինչպես և մյուս օրինակներում, գործում է Ճանաչողական լեզվաբանության սկզբունքը:

Չորրորդ գլխում կատարվել է ուսումնասիրվող լեզուների ձևաբանական և կառուցվածքային առանձնահատկությունների քննության: Հոլովական համակարգերի գուգադրական վերլուծությունը ցույց է տալիս, որ անգլերենի և հայերենի հոլովական համակարգերը մակերեսային մակարդակում չեն համընկնում, ինչը չի կարելի ասել խորքային մակարդակի վերաբերյալ, երբ երկու լեզուների միջև գրանցվում են գրեթե լիարժեք նմանություններ: Աշխատանքի այս մասում ուսումնասիրվել են նաև անգլերենի և հայերենի խնդրի շարադասության առանձնահատկությունները, առանձնացվել դրանց նմանություններն ու տարբերությունները: Անգլերենի, ինչպես նաև հայերենի համար գերիշխողը SVO շարահյուսական կադայարն է:

Օրինակ՝ Կամիլյան **վերցրեց թերթը, շուտամուտ տվեց**, տեսնելով խոշոր տառերով ամուսնու անունը՝ ամեն ինչ հասկացավ: (Այվազյան 136)

Սակայն հարացուցային մակարդակում հայերենի համար սովորական կարող է համարվել նաև SOV կադայարը: Այսպես, Հ. Պետրոսյանը գտնում է, որ «սովորական շարադասությամբ ուղիղ խնդիրը դրվում է ստորոցայից հետո, շարադասությունը կարող է փոխվել տրամաբանական շեշտի հետ կապված կամ այլ անդամների հարաբերակցությամբ պայմանավորված»:⁹ Այդ տեսակետը համահունչ է մի շարք հայ լեզվաբանների կարծիքին՝ երբ տրամաբանական շեշտն ընկնում է ուղիղ խնդրի վրա: Օրինակ՝ Նա այդ անձնվեր **երիտասարդին սիրեց, համակրեց** ավելի, քան Վարդանը: (Բաֆֆի)

Շրջուն շարադասությունը կարող է պայմանավորված լինել ոչ միայն տրամաբանական-իմաստային, այլև ոճաարտահայտչական գործոնների երանգավորումներով: Վերջինս հատկապես բնորոշ է բանաստեղծական ժանրին:

Օրինակ՝ Ես իմ անուշ Հայաստանի արևահամ **բառն** եմ սիրում,

Մեր հին սագի ողբանվազ, լացակումած **լարն** եմ սիրում... (Զարենց)

Նույնը կարելի ասել անգլերենի վերաբերյալ, միայն այստեղ խնդիրը կարող է դրվել է ոչ միայն ստորոցայից հետո, այլև նախադասության

⁹ Պետրոսյան Հ. Ջ. *Հայրենագիտական բառարան*. Երևան, Հայաստան, 1987, էջ 492:

սկզբում, առանց խախտելու SV (ենթակա+ստորոգյալ) հաջորդականությունը: Այդ երևույթը լեզվաբանության մեջ կոչվում է թեմայնացում (topicalization):

Օրինակ՝ ա) **Him** I probably would visit in the hospital just to hear him speechless and see him wasting away. (Heller)

բ) **Naples** I remember but all those other towns along the coast are a bit of blur. (Carther and Mc Carthy)

Իմի բերելով երկու լեզուներում ուղիղ խնդրի ուսումնասիրությունը՝ կարելի է ասել, որ հայերենում, ի տարբերություն անգլերենի, ուղիղ խնդիրը ոչ սերտ կապի մեջ է գտնվում անցողական բայի հետ, ինչով էլ պայմանավորված է դրա հաճախակի բացակայությունը նախադասության կառուցում: Այն, որ հայերենում խնդիրն ավելի հաճախ է զեղչվում, կարելի է բացատրել «վերաբերային տարածության» սկզբունքով, որը հայերենում գտնում է լավագույնս իրացում: Այստեղ հայերենը զգալիորեն տարբերվում է անգլերենից, որտեղ ուղիղ խնդրի առկայությունը որոշ դեպքերում խիստ անհրաժեշտություն է: Այստեղ, ըստ երևույթին, գործում է Տ. Գիվոնի առաջարկած «վերաբերային տարածության» (референциальное расстояние) սկզբունքը: Ըստ այդ դրույթի՝ որքան մոտ են գտնվում վերաբերյալի առաջին հիշատակումը տեքստում և դրա հաջորդ հիշատակումը, այնքան պակաս անհրաժեշտություն կա երկրորդ անգամ դա շեշտադրելու:¹⁰ Այսպիսով, հայերենը այդ տեսակետից զգալիորեն տարբերվում է անգլերենից, քանզի նշված պայմաններում այն թույլ է տալիս ուղիղ խնդրի զեղչումը:

Օրինակ՝ ա) Dirk Stroeve **took off his spectacles and wiped them.** (Maugham)

Դիրք Մթրյովը **հանեց ակնոցը և սրբեց:** (Մոեմ)

բ) Sibyl **rushed to her,** flung her arms round her neck, and **kissed her.** (Wilde)

Սիբիլը **վազեց դեպի մայրը,** գրկեց պարանոցը և **համբուրեց:** (Ուայլդ)

Անուղղակի խնդիրը հայերենում, ի տարբերություն անգլերենի, էլ ավելի պակաս կապված է բայի հետ, ինչի հետևանքով այն հեշտությամբ զեղչվում է: Այն զեղչվում է նույնիսկ այն բայերի դեպքում, որոնք անգլերենում սովորաբար առանց դրա չեն գործածվում: Համեմատենք հետևյալ նախադասությունները.

He **told me** I eat like a hog and I beat him for it. (Fitzgerald)

Նա **ասաց,** որ խոզի պես եմ ուտում, ես էլ ծեծեցի նրան: (Ֆիցջերալդ)

Դեռ ավելին, հայերենում կարող են հանդիպել կառույցներ, երբ բացակայում են և՛ ուղիղ, և՛ անուղղակի խնդիրը, մի բան, ինչը անգլերենում գրեթե բացառվում է: Օրինակ՝ He jumped up, and seized her roughly by the arm. «**Show him to me:**» (Wilde)

¹⁰ Givon T. *Topic Continuity in Discourse: A Quantitative Cross-Language Study*//
Typological Studies in Language, vol. 3, 1983.

Պատանհին վեր ցատկեց և ամուր բռնեց նրա ձեռքը: «Դե **ցո՛ւյց տուր**»: (Ուայլը)

Եթե համեմատենք հարացուցային մակարդակում ուղիղ և անուղղակի խնդրի հարաբերակցությունը նախադասության կառուցում, կտեսնենք, որ անզլերենում ուղիղ և անուղղակի խնդիրն ավելի մոտ են իրար, քան հայերենում, որտեղ դրանց առկայությունը չի պայմանավորված մեկը մյուսով: Այդ հարաբերակցությունը երկու լեզուներում կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերով՝



Ընդհանուր առմամբ հայերենը և անզլերենը ուղիղ խնդրի զեղչման հարցում ցուցաբերում են որոշակի զուգամետություն: Ինչպես և անզլերենում, հայերենում անցողական բայերը չեն վերցնում ուղիղ խնդիր, երբ դրանք արտահայտում են ոչ թե բուն գործողություն, այլ միայն ենթակայի ունակություն, կարողություն կամ հակվածություն՝ իրագործելու այս կամ այն գործողությունը:

Օրինակ՝ Սկսեցի **կարդալ**, կապելով վանկերը և երգելով, ինչպես մեզ սովորեցրել էին **կարդալ**: (Բակունց)

Ինչպես և անզլերենում, հայերենում նույնպես խնդիրը ցեղջվում է, եթե այն հայտնվել է նախորդող կամ հաջորդող համատեքստում: Սակայն ի տարբերություն անզլերենի, բազմակի ստորոցյալների դեպքում, հայերենում խնդիրը հիմնականում գործածվում է միայն առաջին բայի հետ:

Օրինակ՝ I couldn't forgive **him** or like **him**... (Fitzgerald)

Ես ոչ կարող էի **նրան** ներել, ոչ էլ կարեկցել... (Ֆիցջերալդ)

Ինչ վերաբերում է ուղիղ և անուղղակի խնդրի շարադասությանը, այդ հարցում անզլերենը և հայերենը որոշ չափով գործում են նույն սկզբունքի շրջանակներում՝ այն տարբերությամբ, որ հայերենը, լինելով թեքական լեզու, թույլ է տալիս ավելի ազատ շարադասություն ոչ միայն խնդրի, այլև ենթակայի համար:

Աշխատանքի չորրորդ գլխի վերջին ենթագլխում կատարվել է անզլերենի և հայերենի անդրադարձ և փոխադարձ բայերով կառույցների զուգադրական վերլուծություն, ի հայտ են բերվել դրանց մեջ եղած զուգամետ և տարամետ գծերը: Փոխադարձություն և անդրադարձելիություն արտահայտող բայերն անզլերենում պահպանում են իրենց իմաստը՝ անկախ այն բանից՝ գործածվում են համապատասխան դերանուններով թե ոչ: Հայերենում այդ կարգի

բայերը ներկայացնում են կրավորական սեռի առանձին խումբ՝ ձևաբանորեն կազմված՝ վ- ածանցով: Եթե այդ բայերը դիտարկենք փոխակերպության տեսանկյունից, կատանանք հետևյալը կաղապարը՝ $V=V+O$ (հագնվել-հագցնել իրեն, համբուրվել-համբուրել իրար): Հայերենի անդրադարձ բայերը սովորաբար չեն գործածվում նույն կարգի դերանունների հետ:

Օրինակ՝ ա) Մայիսի մեկին նա քնից զարթոնեց թե չէ, վեր կացավ, **լվացվեց, սանրվեց, գուզվեց, զարդարվեց** և շտապեց փողոց: (Ասատրյան 233)

բ) Լուսնի տակ աղջիկը հանեց իր խորխը, ջրհորի վրա կռացավ ու սկսեց **լվացվել**: (Թումանյան)

Առանձնացվում է փոխադարձ բայերի երկու տեսակ՝ ա) իսկական փոխադարձ բայեր, որոնք պահպանում են փոխադարձելիությունը առանց նշված դերանունների, այսպես կոչված օրգանիկ (organic), բ) ոչ իսկական կամ ոչ օրգանիկ (inorganic) փոխադարձ բայեր, որոնք այդպիսիք կարող են համարվել միայն փոխադարձ դերանունների զուգակցությամբ:¹¹

Հայերենի համար, փաստորեն, այդպիսի զատումը կարելի է ներկայացնել փոխադարձության իմաստի արտահայտության հարադրական և համադրական ձևերի միջոցով: Օրինակ ա) We **kissed** (each other. Մենք **համբուրվեցինք**) **համբուրեցինք իրար**:

բ) They **adore** one another. **Պաշտում են** իրար:

զ) But both of us **loved** each other all the time... Բայց ամբողջ ժամանակ **սիրում էինք** միմյանց ...

Վերոնշյալ բայերը (բ, գ) չեն կարող համարվել իսկական (օրգանիկ) փոխադարձ բայեր, քանզի առանց խնդիրների (one another, each other, իրար, միմյանց) չեն պահպանում փոխադարձության իմաստը, այսինքն՝ չենք կարող ասել They **adore** (պաշտում են) կամ But both of us **loved** (բայց ամբողջ ժամանակ սիրում էինք), Ընդհակառակը՝ իսկական բայերը (kiss, part) այդ իմաստը պահպանում են նույնիսկ առանց փոխադարձ դերանվան: Օրինակ՝

In Sibyl's own room they **parted**. (Wilde)

Միբիլի սենյակում նրանք **բաժանվեցին**: (Ուայլդ)

Մակայն, ինչպես և անգլերենում, հայերենում էլ նույն բայերը կարող են գործել իբրև սովորական անցողական բայեր և վերցնել ուղիղ խնդիր՝ She **kissed** her son. Նա համբուրեց որդուն:

Եզրակացության մեջ ամփոփվում են կատարված ուսումնասիրության արդյունքները.

¹¹ Blokh M. *A Course in Theoretical English Grammar*. M.: Visshaya Shkola, 1983, p. 182.

Խնդրագուրկ անցողական բայերով կառույցների վերլուծությունը անգլերենի և հայերենի հիման վրա թույլ է տալիս անել հետևյալ եզրակացությունները.

1. Խնդրի կարգավիճակը էապես տարբերվում է նախադասության մյուս երկրորդական անդամների կարգավիճակից: Խնդիրը սերտորեն կապված է բայ-ստորոցյալի հետ՝ դրա հետ կազմելով միասնական միավոր: Նրա դերը նախադասության մեջ կարևորվում է նրանով, որ այն ճշգրտում է բայի իմաստը՝ ապահովելով նրա արժույթային հատկանիշների դրսևորումը:
2. Անցողական բայերը որոշ լեզվական կամ ոչ լեզվական պայմաններում կարող են կիրառվել առանց խնդրի: Այդ երևույթը գուցարկվում է ոչ միայն գեղչման, այլև զրո անդամի (տարրի) կարգի հետ: Անցողական բայերի խնդրի գեղչումը տեղի է ունենում, երբ այդ անդամի վերականգնումը նախադասությունում հնարավոր է տարբեր լեզվական և արտալեզվական պայմանների շնորհիվ, որոնք թույլ են տալիս դրա բացթողումը: Զրո կարգի սկզբունքը գործում է այն դեպքում, երբ անցողական բայերը գործածվում են բացարձակ իմաստով, այսինքն՝ ցույց են տալիս ոչ թե գործողություն, այլ կարողություն, հակում՝ կատարելու այս կամ այն գործողությունը:
3. Խնդրագուրկ բայերի գործածումը առաջին հերթին պայմանավորված է դրանց իմաստաբանությամբ, դրանց արժույթականությամբ: Որքան լայն է խնդիրների շրջանակը, այնքան պակաս է հնարավոր լինում անցողական բայերի կիրառումը առանց խնդրի և ընդհակառակը: Մենիմաստ բայերը հակված են կիրառվելու առանց խնդրի: Բայի գործածումն առանց խնդրի որոշ դեղքերում հանգեցնում է դրա բառայնացմանը: Ուրիշ պայմաններում խնդրագուրկ բայերն ստանում են ինչ-որ վերացական իմաստային նրբերանգ և բովանդակային առումով մոտենում են գոյականի և ածականի քերականական կարգավիճակին:
4. Խնդրագուրկ կառույցներն ավելի հաճախ հանդիպում են անցողական բայերի անդամ ձևերի հետ (անորոշ դերբայ, ներկա դերբայ, գերունդ): Բայի դիմավոր ձևերի դեպքում նախապատվությունը տրվում է ներկա անորոշ ձևին, որն արտահայտում է ավելի վերացական, ավելի ընդհանրացած բնույթի գործողություններ:
5. Անցողական բայերի խնդրի գեղչումը կարելի է բացատրել իրադրային՝ նախորդող և հաջորդող համատեքստով, երբ կրկնողության դեպքում բայը կիրառվում է առանց նախադասության այդ անդամի:
6. Անցողական բայեր ընդգրկող կառույցներում խնդրի գեղչումը կարող է պայմանավորված լինել հաղորդակցական և գործաբանական գործոններով: Խնդիրը գեղչվում է, երբ հաղորդակցական կիզակետում գտնվում է ինքը՝ գործողությունը, այլ ոչ թե առարկան, որին ուղղված է այդ գործո-

դությունը: Գործարանական առումով խնդրի բացթողումը կարելի է բացատրել տարբեր պատճառներով, հոգեբանական և բարոյական նկատառումներով: Մի խումբ անցողական բայեր՝ այսպես կոչված գործարանական ցուցիչներ, որոնք նախադասությունում կարևոր հաղորդակցական դեր են կատարում, որպես կանոն հանդես են գալիս առանց խնդրի:

7. Անցողական բայերի գործածությունը առանց ուղիղ խնդրի կարելի է դասակարգել ըստ անցողականության սանդղակի՝ 1) անցողական բայեր, որոնք բացառիկ դեպքերում են գործածվում առանց խնդրի (have, take, put, bring և այլն): 2) Անցողական բայեր, որոնց խնդիրը հեշտությամբ վերականգնվում է նախորդող կամ հաջորդող համատեքստից: 3) Անցողական բայեր, որոնց խնդիրը ընկալելի է ամբողջ տեքստի մակարդակով:
8. Անգլերենի և հայերենի խնդրագուրկ կառույցների զուգադրական քննությունը ի հայտ է բերում այդ լեզուների միջև եղած նմանությունները և տարբերությունները:
 - Խնդիրների դասակարգման հիմքում ընկած են տարբեր սկզբունքներ և մոտեցումներ: Անգլերենում այն գլխավորապես հիմնված է շարահյուսական ձևաբանական սկզբունքի վրա, ինչի շնորհիվ առանձնացվում են հիմանականում խնդրի երեք տեսակ՝ ուղիղ, անուղղակի (նախդրավոր և ոչ նախդրավոր) և բարդ: Հայերենում խնդրի տիպաբանական դասակարգման հիմքում ընկած է ոչ միայն շարահյուսական-ձևաբանական, այլև իմաստային սկզբունքը, ինչի շնորհիվ հայերենում տարբերակվում են ոչ միայն ուղիղ և անուղղակի խնդիրներ, այլև յուրաքանչյուր տեսակի մեջ առանձնացվում են տարբեր ենթախմբեր՝ ըստ իմաստային և այլ չափանիշների: Երկու լեզուներում էլ խնդիրը գործածվում է ինչպես բայի դիմավոր, այդպես էլ անդեմ ձևերից և ածականից հետո: Անգլերենի խնդիրների մեջ յուրահատուկ տեղ է գրավում բարդ խնդիրը, որի համարժեքը հայերենը չունի, և որը հայերեն է թարգմանվում խնդիր երկրորդական նախադասությամբ:
 - Ուղիղ և անուղղակի խնդրի շարադասությունն անգլերենում և հայերենում գործում է նույն սկզբունքի շրջանակներում՝ այն տարբերությամբ, որ հայերենը, լինելով թեքական լեզու, թույլ է տալիս խնդրի ավելի ազատ շարադասություն:
 - Հայերենում, ի տարբերություն անգլերենի, ուղիղ խնդիրը այնքան էլ սերտորեն չի կապվում անցողական բայի հետ, ինչով էլ պայմանավորված է դրա հաճախակի բացակայությունը նախադասության կառույցում: Այն, որ հայերենում խնդիրը, հատկապես անուղղակի խնդիրը, ավելի հաճախ է զեղչվում, կարելի է բացատրել «վերաբերային տարածության» սկզբունքով, որը հայերենում գտնում է լիարժեք իրացում:

- Ինչպես և անգլերենում, հայերենում անցողական բայերը չեն վերցնում ուղիղ խնդիր, երբ դրանք արտահայտում են ոչ թե բուն գործողություն, այլ միայն ունակություն, կարողություն կամ հակվածություն՝ իրագործելու այս կամ այն գործողությունը, որի դեպքում դրա անցողականության կարգավիճակը կասկածի տակ է առնվում, կամ էլ դրանք համարվում են անցողականության ցածրագույն աստիճան ունեցող բայեր:
- Անգլերենը և հայերենը ցուցաբերում են զուգամետություն ուղիղ խնդրի գեղջման հարցում, եթե առկա են բազմակի ստորոցյալները, ինչպես նաև նախորդող համատեքստի գործոնը, թեև հայերենի համար այդ պայմանները խիստ օրինաչափություն չեն:
- Փոխադարձություն և անդրադարձելիություն արտահայտող բայերն անգլերենում պահպանում են իրենց իմաստը՝ անկախ այն բանից գործածվում են խնդրի հետ, թե ոչ: Հայերենում այդ կարգի բայերը ներկայացնում են կրավորական սեռի առանձին խումբ՝ ձևաբանական -վ- ածանցով, հետևաբար, որպես կանոն, չեն վերցնում խնդիր: Սակայն ինչպես և անգլերենում, հայերենում նույն բայերը կարող են գործել իբրև սովորական անցողական բայեր և վերցնել ուղիղ խնդիր: Անգլերենում որոշ դեպքերում բայ + անդրադարձ դերանուն կապակցությունը ձեռք է բերում յուրահատուկ իմաստային երանգներ, իսկ որոշ դեպքերում դրանց գեղջումը տեղիք է տալիս երկիմաստության, ինչը կարող է վերացվել լայն համատեքստի շնորհիվ:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Խնդրի տիպավորման հարցը (անգլերենի նյութի հիման վրա հայերենի զուգադրությամբ) // Կանթեղ, գիտական հոդվածների ժողովածու 4 (53), Երևան: Ասողիկ հրատ., 2012, էջ 134-142:
2. Խնդրագուրկ անցողական կառույցների գործածության պայմանները (անգլերենի հիման վրա) // Կանթեղ, գիտական հոդվածների ժողովածու 3 (56), Երևան: Ասողիկ հրատ., 2013, էջ 86-93:
3. On Objectless Transitive Verbs in English, Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, գիտական աշխատությունների ժողովածու 13, Երևան: ԵՊՀ հրատ., 2012, էջ 23-32:
4. Constructions with Reflexive and Reciprocal Verbs in English (with special reference to Armenian) // Armenian Folia Anglistika, International Journal of English Studies, 1(12), 2014, Yerevan, p. 63-69.
5. Construction with Reflexive and Reciprocal Verbs in English // Программа IV международной научно-методической конференции. Тезисы докладов 20-21 февраля 2014, Ереван: изд-во РАУ, 2014.

Конструкции с безобъектными транзитивными глаголами в английском языке (в сопоставлении с армянским языком)

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук

по специальности 10.02.07 “Германские языки”

Резюме

Настоящая диссертация посвящена исследованию конструкций с опущенным дополнением в английском языке в сопоставлении с армянским языком. Такого рода трансформации являются одной из характерных черт обоих языков, в особенности их разговорного стиля.

Целью диссертационной работы является изучение специфических особенностей функционирования транзитивных глаголов, которые позволяют опущение прямого и косвенного дополнения в структуре предложения в английском и армянском языках. Для осуществления этой цели были поставлены следующие **задачи**:

- Определить категории транзитивности – нетранзитивности с позиций новейших подходов и методов;
- изучить конструкции с опущенным прямым и косвенным дополнением в английском языке с указанием частотности их функционирования;
- выяснить, в каких случаях опущение дополнения определяется эллипсом, и в каких случаях нулевой категорией;
- выявить лингвистические предпосылки; способствующие опущению дополнения (прямого и косвенного) в структуре предложения;
- выделить экстралингвистические факторы, влияющие на актуализацию безобъектных конструкций в английском языке;
- дать краткий обзор падежной системы, а также структуры армянского языка в сравнении с английским.
- провести сопоставительный анализ данных конструкций на базе двух изучаемых языков с целью выделения конвергентных и дивергентных черт их актуализации;
- исследовать конструкции с взаимными и возвратными глаголами в английском и армянском языках с целью выделения их морфологических и структурных сходств и различий.

Актуальность диссертационной работы определяется тем, что, несмотря на наличие работ по данной тематике в английском языке, некоторые ее аспекты требуют более глубокого освещения. Работа **актуальна** еще и тем, что такого рода исследование в армянском языке практически до сих пор не проводилось, а сопоставительный анализ позволил выявить значительные структурные различия между двумя изучаемыми языками.

Научная новизна работы заключается в комплексном и разностороннем исследовании безобъектных конструкций, с привлечением новых критериев анализа: коммуникативно-прагматического, психолингвистического, стилистического. **Новым** можно считать и тот факт, что в центре исследования не только прямое, но и косвенное дополнение. Впервые производится сопоставительный анализ данных конструкций на базе английского и армянского языков, с выделением конвергентных и дивергентных черт их актуализации. Что касается армянского языка, то изучение конструкций данного типа в настоящем исследовании фактически производится впервые.

Теоретическая значимость исследования заключается в рассмотрении таких фундаментальных категорий как транзитивность - нетранзитивность в свете новейших подходов и критериев, а также в расширении рамок применения эллипсиса и его разграничении от смежных категорий. Исследование вносит определенный вклад в лингвистическую типологию, в особенности в структурную типологию, пополняя ее новыми данными относительно разных в структурном отношении языков: английского и армянского.

Практическая значимость определяется тем, что результаты работы могут быть использованы в курсах по функциональной грамматике, семантическому синтаксису, прагмалингвистике, а также структурной типологии. Они могут быть полезны и при переводе и составлении учебных пособий.

Диссертация состоит из Введения, четырех глав, Заключения и Библиографии.

MARY VARDAN VARDANYAN
Constructions with Objectless Transitive Verbs in English
(with special reference to Armenian)

Summary

The present dissertation is devoted to the study of constructions with objectless transitive verbs in English in comparison with those in the Armenian language. This kind of transformation is inherent (with a different degree of frequency) in both the languages, especially in their conversational style.

The purpose of the research work is the investigation of specific peculiarities of functioning of transitive verbs which allow the omission of an object (direct and indirect) in the structure of the sentence both in English and Armenian.

To achieve this goal the following **objectives** are set forth:

- To define the essence of such categories as transitivity and intransitivity from the recent approaches and methods;
- to study constructions with the omitted direct and indirect object, with establishing the degree of frequency of their functioning in the English language;
- to examine the linguistic contexts in which the omission of an object occurs;
- to identify extralinguistic conditions which make it possible for transitive verbs to drop their objects;
- to indicate in which cases the absence of an object in the structure of the sentence is determined by ellipsis, and in which cases by the empty (null) category;
- to give a brief review of the case system as well as the structure of the Armenian language in comparison with the English language;
- to make a comparative analysis of the constructions under study in the English and Armenian languages, with pointing out the convergent and divergent characteristics of their actualization;
- to study reflexive and reciprocal constructions in both the languages, with indicating the similarities and differences of their functioning.

The relevance of the investigation is conditioned by the fact that this kind of constructions constitute an indispensable part of not only conversational English, but also its written form and present certain difficulties when attempts are made to render them in Armenian. To

provide an adequate translation of these constructions from English into Armenian it is necessary to study the peculiarities of actualization of these constructions in both the languages having different structural characteristics..

The novelty of the research is provided by the comprehensive investigation of objectless constructions, with the application of new criteria of analysis: communicative, pragmatic, psychological, stylistic. The object of the investigation is not only the direct, but also indirect object, which has not been a special object of study before. The dissertation provides a comparative analysis of the constructions under study on the basis of the English and Armenian languages, with the establishment of convergent and divergent features of their actualization. As for the Armenian language this kind of investigation is practically done for the first time.

The theoretical value of the dissertation is manifested in the study of such fundamental categories as transitivity-intransitivity in the light of new methods and approaches as well as in widening the scope of usage of ellipsis and indicating its difference from seemingly identical categories. The investigation makes a certain contribution to linguistic typology, structural typology in particular, thus adding new facts concerning the two languages with different structure: English and Armenian.

The practical value of the investigation lies in the fact that its results can be used in the theoretical courses on functional grammar, semantic syntax, pragmalinguistics as well as structural typology. The data obtained from the study can be used in translation and in compiling grammar textbooks.

The dissertation consists of Introduction, four chapters, Conclusion and References.

A handwritten signature in black ink, appearing to be 'R. R. R.', written in a cursive style.